Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26-ի N 381- Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
մարտի 2-ի N 276-Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ
ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշմամբ սահմանված՝ անձի բժշկասոցիալական փորձաքննության դիմումները բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովներին ներկայացվում են փոստային կամ էլեկտրոնային եղանակով:

2. Դիմումների հիման վրա բժշկասոցիալական փորձաքննությունները և վերափորձաքննությունները (այդ թվում՝ փորձաքննական խորհրդատվության նպատակով և քրեակատարողական հիմնարկներում իրականացվող վերափորձաքննությունները) իրականացվում են եռամսյա ժամկետում, բացառությամբ չարորակ նորագոյացություններ (արմատական բուժումից հետո, մետաստազներով, ախտադարձներով, բուժման անարդյունավետության կամ բուժման ոչ ենթակա դեպքերում, խիստ արտահայտված ինտոքսիկացիայով, կախեքսիայով, ուռուցքի քայքայումով), վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության՝ օրգանիզմի ֆունկցիայի կայուն խիստ արտահայտված խանգարումներ ունեցող անձանց, անաշխատունակության թերթիկի ժամկետը երկարաձգելու, «հաշմանդամ երեխա» կարգավիճակից հետո 18 տարին լրանալու դեպքերում իրականացվող բժշկասոցիալական փորձաքննությունների (վերափորձաքննությունների):

3. Ստեղծվում են արտակարգ դրության պայմաններում բժշկասոցիալական փորձաքննության հերթապահ հանձնաժողովներ (մասնագետներին ընտրելիս հաշվի առնելով տարիքային, առողջական խնդիրներով պայմանավորված առանձնահատկությունները)՝ սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված բացառությունների դեպքերում բժշկասոցիալական փորձաքննություններ իրականացնելու նպատակով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ